



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

\_\_\_ սեպտեմբերի 2017 թվականի №\_\_\_ Ա  
ք. Երևան

**«ՋԻՆՋ ԱՐՓԱ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի հոկտեմբերի 28-ի №363Ա որոշմամբ «ՋԻՆՋ ԱՐՓԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Արփա-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0581 (այսուհետ՝ ԼԷ №0581 լիցենզիան) լիցենզիան՝ մինչև 2033 թվականի հոկտեմբերի 17-ը գործողության ժամկետով,

բ) Հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի №364Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է «Արփա-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0582 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0582 լիցենզիան)՝ մինչև 2033 թվականի հոկտեմբերի 17-ը գործողության ժամկետով,

գ) Ընկերությունը 2017 թվականի հուլիսի 31-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ տեղեկացնելով, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունից «Արփա-2» և «Արփա-3» փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրված վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման նպատակով մտադիր է կնքելու գրավի պայմանագիր,

դ) Ընկերությունը նախկինում՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում գույքի գրավադրման ժամանակ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով գործարքի վերաբերյալ չի տեղեկացրել Հանձնաժողովին, ուստի Հանձնաժողովը նշված խախտման փաստի ուսումնասիրության

նպատակով 2017 թվականի օգոստոսի 21-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2017 թվականի օգոստոսի 22-ի գրությամբ ընդունել է կատարված խախտումները՝ Հանձնաժողով ներկայացնելով 2016 թվականի մարտի 25-ին «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) ԸԳՊ16/178-01, ԸԳՊ16/183-01 և ԸԳՊ16/184-01 պայմանագրերը և համապատասխանաբար №31032016-10-0004, №31032016-10-0007 և №31032016-10-0003 վկայականները, որոնց համաձայն Ընկերությունը «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում գրավադրվել է ԼԷ №0581 և ԼԷ №0582 լիցենզիաների լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ «Արփա-2» և «Արփա-3» փոքր հիդրոէլեկտրակայանների շենքերի և գլխամասային հանգույցների կառուցման համար անհրաժեշտ հողամասերը,

զ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 3-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձը դիմում է հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով.

2) 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են հանձնաժողովին:

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ ԼԷ №0581 և ԼԷ №0582 լիցենզիաներով իրականացվող գործունեության համար անհրաժեշտ «Արփա-2» և «Արփա-3» փոքր հիդրոէլեկտրակայանների շենքերի և գլխամասային հանգույցների կառուցման համար անհրաժեշտ հողամասերի գրավադրման գործարքներն Ընկերության կողմից իրականացվել են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների խախտմամբ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. ԼԷ №0581 և ԼԷ №0582 լիցենզիաներով իրականացվող գործունեության համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավունքի փոխանցումը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտմամբ իրականացնելու համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**